201.3
J-21

1619 201.3 Ն 302 401-ՀԿ
Ժ-21
449/6

ԺԱՄԱՆԱԿԻ ՎԵՐԴՆ

Թարգմանութիւն:

Ներսէսէ Պոլսեցւոյ:

1010/40672

Ի ՄՈՍԿՈՎ:
Ի Տպագրատան Հայոց Տէրունական Լաւրէանցոյ:
1840.

2004

241

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по напечатаніи, представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Москва, 1840 года, Сентября 29 дня.

Цензоръ В. Флеровъ.

ԺԱՄԱՆԱԿԻ ՎԵՐՋԸ։

Մարգարէական բանն մեզ հաւատացնում է։ Յայտ. Ի. 5. 6. թէ մին էնալէսի օր կըգայ, որ հրեշտակն իրան ձեռըն բարձրացնելով դէպի երկինքն՝ երդում կուտէ նորանով որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից. Ռէ էլ ասէլի ժամանակ չըկայ։ Որքան որ հեռու լինի էս երդումի սարսափելի ժամանակն, բայց հենց էս խօսքս ամէն օր ասվում հազարաւոր մարդկանց, որ մեր մահկանացու եղբարք են. նորանք լսում են և մեռնում։

Մահն ինչպէս հրեշտակի թևերով թըռչում տանից տուն և ասում ամէն մէկին որ էնտեղ բնակված է. թէ քեզ համար էլ աւելի ժամանակ չըկայ. դու պրծել ես քո վազելդ և անց է կացել քեզ համար սահմանված ժամանակն. հիմիկ մտիր յաւիտենական աշխարհքըն։ Քանի որ էս հրամանս չի ասվել մեզ՝ լաւ կըլինէր, եթէ մենք մեզանից կըհարցնէինք. մի թէ պատրաստ ենք մենք լսելոյ և ընդունելոյ էն խօսքըն և հրամանըն։

Ժամանակի վերջն. մեր երկրաւոր շահի և ուրախութեան վերջն։

Հիմիկ մարդիքն շատ կերպով հետևումեն մարմնոյ ցանկութեանն, աչքերի ցանկութեանն և էս կեանքիս ամբարտաւանութեանն, բայց էն ժամանակն ոգահն կրքաշվի կրջոկվի իրան խաղնայիցն. ամբարտաւանն կրխոնարհվի և կրցածանայ. հարբեցողն էլ չի ուղիլ հարբեցնող խրմելիքրն, և անառակն էլ չի պարծենալ իրան խայտառակութենովն և պղծութենովն: Այսպա պատշաճ է ձեզ ով մարդիք, որ անցկացնէք ձեր կեանքրն մեղքերի մէջն, որ ձեզ անարգելի են անում, և ունայնութեց մէջն, որ մենակ մին քիչ ժամանակ կարող են մխիթարել ձեր սրտերրն:

Զգոյշ կացէք իմ բարեկամներս, որ ձեր սիրտրն չը կպցնէք էս կենաց անցաւոր բարիքներիցն և փառքիցն. զգոյշ կացէք որ չըմատնըվիք նորանց էնպէս, մինչև կուռք շինել նորանց ձեզ համար. որ չըլինի թէ դուք վերջն առանց օգնութեան և խեղճ մնաք: Ինչու որ՝ նորանք չեն կարող ձեզ հետ գալ էն հոգևոր աշխարհն. նորանք էս անցաւոր ժամանակիս բաներ են և յաւիտենական աշխարհքումն տեղ չունին: Ամէն բանի վերջն մնացել է. ուրեմն պարկեշտ և արթուն կացէք: (Ա. Պէտ. Դ. 7): Պարկեշտ և արթուն կացէք ամէն երկրաւոր ուրախութեանց մէջն և պատրաստ կացէք նորանցից ջոկվիլ, երբ որ հրեշտակն կասէ. թէ էլ աւելի ժամանակ չը-

կայ։ Այս խօսքս ամէն երկրաւոր ուրախութիւնեն կըվերջացնէ և ամէն անցաւոր բաներուն վերայ դրած յոյսըն՝ խսպառ կըկտրէ։

Ժամանակի վերջն. Աստա զղջանալոյ և փրկելոյ համար սահմանված ժամանակն ունի իրան վերջըն։ Մենք մտնումենք էս աշխարհքիս մէջ տգիտութենով խաւարված, և հենց մեր բնութենովն յօժար ենք դէպի մեղք գործելն։ Աստուծոյ պատկերն մեր մէջն կորած է, և մեր կեանքն է միայն էն ժամանակն, որ տրվված է մեզ էն կորած պատկերըն մին էլ նոր գտնելոյ ստանալոյ համար։

Եթէ մենք կըմեռնենք անզեղջ, և առանց նորոգվելոյ հաւատքով. ապա պէտք է որ յաւիտեան մնանք անզեղջ մեղքով պղծված և անսուրբ։ Ա՛խ. ինչքան պէտք է որ էս մտածմունքս զարթնացնէ և յորդորէ ամէն մարդոյն, որ ինքն իրան սիրտըն փորձէ և քննէ. մի թէ նոր ծնված եմ ես սուրբ հոգովն։ Ինչպէս են իմ ուրախութիւններն և ցանկութիւններն։ Մի թէ իմ սիրտս Աստուծոյ տաճար է, կամ մեղայ բուն։ Ա՛խ քանի կարճ է ժամանակն որ նորանում պէտք է էս քննութիւնքս պրծնել։

Ժամանակի վերջն. Եթէ ժամանակի վերջն հասնի մեզ, դեռ որ մեղայ մէջն ենք վարվում ապա անկարելի կըլինի որ Աստուծով վայելենք և միխիթարվինք։

Մենք կենումենք էստեղ Աստուածանից հեռու քցված մեղքի պատճառովն և չենք կարող նորան տեսնել էնպէս, ինչպէս որ նա է. բայց նա էլ խսպառ չի թողել մեզ: Նա իրան յայտնել է ողորմած և պատրաստ թողութիւն տալոյ համար: Նա ասաց: Ահա հիմիկ է ընդունելի ժամանակն, հիմիկ է փրկութեան օրն: (Բ. Կորն. Զ. 2): Մարգարէքն և առաքեալքն, թէպէտ էս աշխարհքիցս գնացել են, բայց դեռ հիմիկ մեզ հետ խօսումեն և ցոյց են տալիս մեզ էն միջնորդին, որ մեր փրկութեան համար իրան անձըն պատարագ արաւ. որ հաւատալով նորա անունովն կեանք ունենանք: (Յօհ. Գ. 31): Նորա սպասաւորներն՝ որ նորանից ուղարկվումեն, մինչև էս օր էլ աղաչումեն մեզ հաշտվիլ Աստուծոյ հետ և հաւատացնումեն մեզ, թէ նա միշտ պատրաստ է ընդունել մեզ իրան գիրկն: Ասա արժան է, որ նորանց աղաղակելըն և կանչելըն փուչ տեղն համարինք և երկնքի Տէրի խօսքերըն անարգենք: Մենք շուտով կտեսնենք, թէ ինչքան մեծ է մեր կորուստն՝ որ էլ բժշկութիւն չենք գտնիլ. ինչու որ՝ երբ որ մարդն էս աշխարհքիցս դուրս կըգնայ, էլ նորա աչքն թողութիւն չի տեսնիլ: Էս օր ողորմած տէրն գալիս է մեր սրտի դուռն և խնդրումէ որ իրան ընդունենք: Նա յորդորումէ և կանչումէ մեզ, որ յետ դառնանք և զղջանանք,

որ նա էլ կարողանայ մեր մեղքերն մեզ բաշխել։ Այլ դուք մի պրնստացնէք ձեր սիրտերն, որ չը լինի թէ էն ժամանակն որ հրեշտակն աղաղակէ, թէ ժամանակի վերջն հասէլ է՝ ինքն Տէրն իրան ձեռքն բարձրացնելով վրէժխնդրութիւն անէ և երդում ուտելով ասէ ձեզ՝ թէ հեռացէք ինձանից, դուք որ անարգեցիք իմ խոստացած բարիքներն։

Ժամանակի վերջն։ Որ ժամանակ որ էս վերջն կըգայ, մեղաւոր մարդոյ սրտի մէջն կըկորչի վերջին յոյսն։ Ո՛չ ով մահիցն առաջ խսպառ ողորմելի չի՛ լինում. բայց ճշմարիտ է, որ շատ անգամ անօրէն մարդիքն ամենից աւելի են ուրախանում, բայց շատ ժամանակ չի մնալ էսպէս. ինչու որ՝ նորանց ուրախութիւնն շուտով տրտմութիւն կըդառնայ։ Ա՛խտ բերէք դուք էն դատաւորին, որ իրան աթոռի վերայ նստած կանչում ձեզ իրան դատաստանի առաջն, որ նորան պատասխան տաք. թէ ի՞նչպէս էք անցկացրել դուք ձեր կենաց ամէն ժամանակըն էն առաջվան աշխարհքումն։ Դուք էնտեղ անցկացրիք քսան, քառասուն կամ եօթանասուն տարի։ Լա՛ ես, կասէ նա՝ տուի ձեզ էն ժամանակըն հազարաւոր օգտակար հնարներին հետ, որ դուք հանէք շնորհաց և փրկութիւն։ Ի՞նչպէս դուք էս ամէնըն գործ ածեցիք։ Քանի՞ կիրակի օրեր տուի ձեզ։ Քանի՞ քարոզներ

էք լսել։ Որչափ յաջողակ ժամանակ տուի ձեզ որ աղօթքին պարապվիք և ձեր հոգւոյ փրկութեան համար միաք անէք, և էլ ձեր հոգոյ մէջ ձեր Աստուած և փրկիչ Քրիստոսի հետ խօսիք, և նորանից շնորհք առնէք։ Այսպէս յաջողակ ժամանակից դուք մին բան շահվել է՞ք, թէ չէ. աղօթք արել է՞ք, թէ չէ՞. ձեր հոգոյ հետ և ձեր ստեղծողի և փրկչի հետ մտածութիւն արել է՞ք, թէ չէ՞։ Կամ թէ ձեզ տրվված ժամանակը փուչ տեղն կորցրել է՞ք հազար յիմարութիւնների մէջն, և անարգել է՞ք էն մին բանը, որ միայն և ամենից առաջ ձեզ համար հարկաւոր է։ Այսպէս ի՞նչ՝ եթէ էն ժամանակն ձեր խղճմտանքն ձեզ կըմեղադրէ. ով կարող է իմանալ էն ահաւոր և սարսափելի տրտմութիւնը, որ ձեր սիրտը կըծակէ որ էլ կաղաղակէք. վայ ինձ՝ խեղճալի մարդ եմ։ (Հռոմ. է. 24)։ Աստուած խօսեց ինձ հետ իմ ծընօղաց խրատովն և իրան պաշտօնեաների և քարոզիչների յորդորմունքովն և էլ իրան սիր աւետարանի խօսքովն. բայց ես էս ամէնքն անարգեցի և իմ հոգիս կորցրի։ Ով որքան սարսափելի է էս բանս։ Արի միաք անենք նորա համար, դեռ քանի որ յոյս ունենք ողորմութիւն գտնելոյ համար։

Յամանակն կըվերջանայ։ Այսպէս որչափ թանդ և պատուական է, քանի որ դեռ չի վերջացել,

մանաւանդ նորանց համար, որ դեռ հիմիկ իրանց մեղքերիցն յետ չեն դարձել: Ամէն սահաթ՝ որ տրվումէ ձեր կենաց համար, Աստուծոյ ողորմութիւն է, որ ձեզ ժամանակ է տալիս ձեր մեղքերիցն զղջանալոյ համար: Այս դուրս եկէք են Տէրի առաջն, որ դուք բարկացրել էք. մանն եկէք են Տէրին՝ դեռ քանի որ կարելի է գտնել նորան, կանչեցէք նորան՝ դեռ որ նա մօտիկ է, գնացէք նորա մօտ Յիսուսի անունովն և առաջ բերէք նորա արդարութիւնը, նորա մահը և նորա միջնորդութիւնը. աղաղակեցէք և ասացէք. Աստուած քաւիր մեզ մեղաւորներիս:

Ժամանակն կըվերջանայ: Ա՛խ. ինչքան մեծ է էն մարդկանց յիմարութիւնն և անմտութիւնն, որ միշտ վախումեն և ահով բռնըվումեն, ամէն ժամանակ որ միտք են անում, թէ ժամանակի վերջն կըգայ, բայց չեն խմանում, թէ ինչպէս սլիտի գործածեն էն իրանց տրվված ժամանակն, որ ամէն օր և ամէն սահաթ անց է կենում: Նորանք էնպէս են խմանում, թէ իրանց հոգին իսկի չի պատրաստված մահուան համար, բայց էնպէս էլ իրանց կեանքըն քաշումեն մին տարուցն մէկէլ տարվան մէջ, և ոչինչ հոգս չեն անում որ իրանց անձըն պատրաստեն մեռնելոյ համար: Իրանց ազատ սահաթներըն կորցնումեն միայն ունայն փուչ բաներին հետևելով. և անհոգու-

թենով և անամենութենով փուչ տեղն անց են կացնում իրանց պատուական ժամանակը, որ տրվ-վաւ նորանց շնորհք և հոգոյ փրկութիւն գտնելոյ համար, և կարծումեն, թէ իսկի մի հարկաւոր գործ չըգայ իրանց համար։ Նորանք կենումեն էն-պէս, իբր թէ անկարելի լինէր իրանց կեանքի ժամանակը ուրիշ կերպով անցկացնել, բայց միայն միշտ խմելով, և ուտելով և ուրախութիւն անելով։ Առաւօտից մինչև իրիկունն միշտ կըտեսնէք նորանց, որ ունայն փուչ բաներին են հետևում. կորցնումեն էն ժամանակը, որ պէտք էր Աստն ընծայել, և էն էլ որ պէտք էր իրանց գործքերին համար գործածել. կորցնումեն էն. ես ասումեմ, կամ ծուլութենով և անհոգութենով, կամ մեղաց և յիմարութեան մէջ մանելով. դեռ քանի որ ժամանակի վերջն օրէցօր վազումէ հասնել նորանց վերայ։

Շատ մարդիկ անդադար դանգատ են անում, թէ իրանց պարապ ժամանակն քիչ է. բայց երբ որ նորանց մի էնպէսի օր է պատահում, որ բան չունին գործելոյ նորանում, իմանում չեն, թէ էս պարապ օրիս հետ ինչ անեն, կամ ինչպէս էս մի սահաթն գործ ածեն մի լաւ և օգտակար բանի համար։

Հարուստ և մեծամեծ մարդիքն լաւ կարող են իրանց ժամանակը էնպէս անցկացնել, ինչ-

պէս որ իրանց կամքն է ուզում, բայց եթէ մտիկ տաս թէ նորանք օրէցօր ինչպէս են գործ ածում էն իրանց ժամանակին. յայտնի կըտեսնես, թէ նորանք չեն գիտում թէ ինչ անեն նոցա հետ. թէ ինչպէս գործ ածեն նորան և թէ ինչպէս ազատվին էն ծանր բեռնիցն, որ ժամանակ է ասվում և որ ամէն օր իրան ծանրութենովն նեղացնում է նորանց հոգին:

Բայց ինչ ժամանակ որ նորանց գլուխն ցաւում է և երեսի ռանգն փոխվում է, և երբ որ բժիշկն նորանց վազմէն տեսնում է անհանգիստութենով նորանց աչքին մտիկ է անում՝ մանաւանդ եթէ գլուխը շարժում է կամ ասում, թէ տարակուսանք ունի նորանց կեանքին համար, ապա ինչպէս տրտմութիւն և ահուվախ բռնում է նորանց հոգին. որ վախումեն թէ ժամանակի վերջն մտիկ է և շուտով կըհասնէ նորանց վերայ. ինչու որ՝ յայտնի իմանումեն որ իսկի պատրաստ չեն արքայութիւնն մտնելոյ համար: Բայց երբոր նորանց հիւանդութիւնն անց է կենում և նորանք տեսնումեն որ առողջ են, ապա մին էլ չեն իմանում, թէ ինչպէս պիտի վարվին իրանց մնացած կեանքի հետ:

Ով քանի խղճալի է մարդկանց որդոց յիմարութիւնն, որ նորանք ուղարկված են էստեղ, որ պատրաստ լինին յաւիտենական կեանքի համար և չեն գիտում, թէ ինչպէս անցկացնեն

իրանց ժամանակը։ Նորանք չեն գիտում, թէ ինչպէս մաշեն իրանց կեանքն և ինչպէս շուտով հասնեն էն օրի վերջին, որ անց է կենում։ Ժամանակը անց են կացնում քընի մէջ և կամ սպարապ մանգալով մին տեղից մէկէլ տեղն առանց մին բան մտածելոյ։ Հարցնում են ամէն մէկից, ով որ նորանց պատահում թէ ինչպէս իրանց ժամանակը պիտի կորցնեն. ինչու որ՝ չեն կարող էն ժամանակը անցկացնել էնքան շուտով ինչպէս որ կամենում են։ Սրա համար իրանց բարեկամներին օգնութիւն են կանչում, որ նորանց հետ ժամանակը կրկարճացնեն ծիծաղ խաղ և ուրախութիւն անելով. որ լինի թէ սրանով ազատվին ժամանակի մահաբեր ծանրութենից։ Բայց եթէ հենց էս ժամանակումն՝ որ նորանց համար էնքան ծանր է երևում, նորանց միտքն կբերեն, թէ նորա վերջն հասել է, ապա էս վերջի մտենալուցն անասելի վախով դողումն։ Ով քանի մեծ է անմտութիւնն և յուսահատութիւնն, և քանի մեծ է էն հակառակութիւնն՝ որ մեղաւոր մարդկանց սրտումն գանվում և նորանց գործքերից երևում։ Իրաւի մարդկանց որդոց սիրտն լիքն է լաւ չարութենով. յիմար զբաղմունքներ կան նորանց սրտումն որքան ժամանակ որ կենդանի են. և յետոյ մեռելների մօտն են գնում։ Ժողով. է. 3։

Ա՛խ երանի թէ էս ծոյլ մարդիքս՝ որ էդպէս իրանց պատրաստվելը էն կեանքի համար օրէց-օր յետ են քըցում, միտք բերէին, թէ ժամանակն յետ չի ընկնում. բայց թէ սահաթներն, օրերն, ամիսներն և տարիներն շատ շուտով իբր թևերով թռչումեն և տանումեն նորանց դէպի յաւիտենական աշխարհն։

Նորանք խաղերի և ուրախութիւնների մէջն յետ են ընկնում, բայց ժամանակն իսկի յետ չի ընկնում։ Ա՛ին էնպիսի օր կըգայ, որ նորանք տըրտմելի փորձով կիմանան՝ թէ որքան մեծ ազնիւ և յաւիտենական բարիքներ են կորցրել. իրանց շնորհաց ժամանակը փուչ տեղն անցկացնելով։ Սուրբ Պետրոս առաքեալն հաւատացնում՝ նորանց, թէ թէև մեղքի մէջ էնքան քնած և թմրած են՝ որ հենց իմանաս թէ քնի ցաւ է ընկել նորանց վերայ, էլ կարելի չէ զարթնացնել նորանց. բայց էնպէս էլ նորանց դատաստանն իսկի դատարկ չի կենալ և նորանց կորուստն զուր չի հասնիլ։ Պետ. Բ. 3։

Շուտով նորանց վերայ կըհասնէ էն սարսափելի սահաթն, որ նորանք ահով կըսովորին իմանալ ժամանակի ճշմարիտ գինը և պատուականութիւնը։ Այսպա էն ժամանակն կըկամենան իրանց ամէն ուրախութիւնը և ամէն հարստութիւնքն և էս աշխարհիս ամէն մեծութիւնը տալ որ մէնակ մին օրի կամ մին սա-

հաթի ժամանակ ստանան զղջանալոյ, դէպի Աստուած դառնալոյ և յուսոյ և փրկութեան ճանապարհին գտնելոյ համար։ Բայց վայ՝ նորանց ժամանակն, փրկութիւնն և յոյսն խսպառ կորել են և իսկի յետ չեն դառնալ նորանց համար։

Ժամանակն կըվերջանայ։ Տե՛ս որքան առատ աղբիւր է էս խօսքս իմաստուն և խելացի մարդոյ համար, որ շատ շատ մտածմունք անէ։ Ինչ ժամանակ որ մոիկ եմ անում ես էն օրին, որ պրծնումէ և արեշականն, որ վեր է մտնում խաւարի մէջ, ապա խղճմտանքն ասումէ իմ սրտին. էդպէս էլ կըպրծնեն քո կեանքի օրերն, քո գործելոյ սահմաններն և շնորհք գտնելոյ ժամանակներն։ Ա՛խ երանի թէ ես կըկարենայի կատարել և Աստուծոյ կամաց պէս վերջացնել ինձ նշանակված և յանձընված գործըն և պաշտօնըն՝ դեռ քանի որ շնորհքի լուսաւոր օրն ինձ համար անց չի կացել. և երանի՜ թէ կըկարենայի ես լաւ գործածել ողորմութեան և շնորհաց էս փայլուն և լուսաւոր սահմանները, դեռ քանի որ գիշերի խաւարն ինձ չի հասել, և քանի որ իմ գործելոյ և աշխատելոյ ժամանակն անց չի՜ կացել։

Ինչ ժամանակ որ ես տեսնումեմ լուսինն՝ որ լոզ է տալիս խաւար ամպերի մէջ. միտքս եմ բերում թէ՝ նա չափումէ իմ կեանքի ժա-

մանակը և ինձ տրվված օրերի բոպէներըն մոտեցնում իրանց վերջին։ Ա՛վ երանի՛ թէ ես պատրաստ լինիմ բարև մնա ասել արեգական և լուսնին, էս ամէն երևելի երկնքին և նորա ամէն պայծառ փառացն։ Որանք ամէնքս չափումեն իմ ժամանակը և օրէցօր մոտեցնումեն ինձ դէպի յաւիտենական աշխարհքն։

Ինչ ժամանակ որ ես բաղի մէջ մանեմ գալիս և էնտեղ կանգնելով մտիկ եմ անում թէ ինչպէս կամաց կամաց շարվում արեգական սահաթի շուաքն, տեսնումեմ որ՝ թէ և նա էն խազերի վերայ, որ սահաթը ցոյց են տալիս՝ էնպէս է մանգալիս, որ համարեա թէ մարդոյ աչքին իսկի չի երևում, բայց էնպէս էլ նա շուտով հասնում վերջի սահաթին։ Ապա հենց էս կերպով իմ սահաթներն և բոպէներն էլ կամաց կամաց անց են կենում, բաց ոչ ինչ տարակուսանք չըկայ, թէ նորանք կըհասնեն իրանց սահաթին և վերջին. թէ և ես իսպառ անհոգ լինիմ նորանց շարժվելոյն և առաջանալոյ համար, թէ ժամանակն անց է կենում և թէ հենց հիմիկ քիչ է մնացել, որ պըրծնըվի։

Երբ որ սկսում նոր տարին և սորա առաջին առաւօտն լուսաւորում ինձ վերայ, ապա թող իմանամ և միտք առնեմ՝ որ առաջին տարին պրծվաւ և անցկացաւ իմ գլխի վերայ՝ նրա հա

մար, որ նոր տարոյն տեղ տայ։ Ուրեմն ճանապարհն, որ էս աշխարհքումս պիտի գնամ՝ մին տարով կարճացաւ, որ սահմանված էր իմ պարտաւորութիւններըն և գործքերըն էս անցաւոր կեանքի մէջն կատարելոյ համար։ Ով երանի թէ երկու տակ աւելի ջերմեռանդ և ջանք անօղ լինիմ, որովհետև էն տարիների թիւն որ նշանակված էին իմ գործելոյն համար, հիմիկ պակասվեցաւ։

Ինչ ժամանակ որ գտնուումեմ իմ օրացուցի մէջն իմ ծննդեան օրըն, որ ես էնտեղ գրելեմ, էն օրըն՝ որ նորանում ես ընկայ մահկանացու մարդկանց կարգի մէջ և մոի էս ունայնութեանով, տրտմութենով և խեղճութենով լցված աշխարհքս՝ նրա համար որ էս կեանքիս փորձութիւններովն պատրաստվիմ էն լաւ կեանքին համար՝ ապա ես զարմանումեմ և աղաղակումեմ. ով ամենակարող Աստուած. որչափ անցկացրի ես էս մահկանացու կեանքըս, որչափ ժամանակ կորցրի և քանի՛ քիչ պատրաստ եմ էն երանելի կեանքն մտնելոյ համար։ Իսկի դեռ պատրաստ չեմ ես պատահիլ մահուան սահմանին, թէ և միշտ և անդադար մտնումեմ իմ կեանքի վերջին։ Ի՛ թէ նոր ծնված եմ ես Աստուծոյ սուրբ հոգովն։ Ա՛ի թէ սկսել եմ ես ճշմարիտ քրիստոնէի կեանքըն վարել։ Պատրաստ եմ ես էն ահաւոր օրին համար, որ

իմ տարիքս, թէ որչափ եմ կացել էս աշխարհ-
քումս՝ կըհամարվին։ Կարող եմ ես մահի նեղ
դռնովն գնալ մտնել հոգևոր աշխարհքն։ Կո-
րոգված և սրբված եմ ես իմ բոլոր բնութեան
և էութեան ամէն մասունքներովն, որ կարենամ
մտնել էն աներևոյթ աշխարհքի մէջ, որտեղ
որ տարիների և օրերի փոփոխութիւն էլ չի
լինիլ, բայց որ մին յաւիտենական օրն կըլցնէ
մեր սիրտն և հոգին և բոլոր էութիւնքն աստ-
ուածային և փառաւոր ուրախութենով և կամ
մին յաւիտենական դիշերն կըպատէ և կըլցնէ
մեր բոլոր էութիւնքն անվերջ տրտմութենով,
տանջանքով և մութ խաւարով։

1010
40672

Ինչ ժամանակ որ ես տեսնումեմ իմ մեռած
բարեկամին կամ ուրիշ մարդոյն՝ որ գերեզմանն
են տանում, ես ասումեմ իմ մտքումս. վայ՝
նորանց տարիքն և բոլէքն անց կացան և նո-
րանց փորձվելոյ ժամանակն վերջացաւ յաւի-
տեան։ Նորանք գնացին իրանց յաւիտենական
բնակարանն և նորանց հոգոյ վիճակն հաստատ
վճռած է յաւիտեան։ Էն հրեշտակն՝ որ երբ-
դում կերաւ, թէ էլ ժամանակ չըկայ, վերջա-
ցրուց նորանց ամէն յոյսն և վախն և արդար
դատաստանի օրէնքին և կանոնին պէս նորանց
վճիռն հաստատ սահմանվեցաւ. որ կամ տան-
ջանքով չարչարվին և կամ երանութենով վա-
յելեն։ Օգոյշ կաց իմ հոգիս. մտածիր դու
էլ քո տեղափոխութեան համար։

Ինչ ժամանակ որ մենք գնումենք հանգիստարանն, որ մեր ընկերներին և բարեկամներին վերջին պարտքը տանք, ուրքան շատ գերեզմաններ ենք տեսնում մեր չորս կողմովն մահի ձեռովն շինված։ Ինչ են էն ամէն տապանագիրքն։ Հա՛ յիշատակ են. որ յայտնումեն մեզ էս քաղաքի կամ շէնի մէջ բնակված մարդկանց մահը և նորանց կեանքի ժամանակը և էն ահաւոր օրը, որ նորանց ամէն մէկին ասվեցաւ, թէ քեզ համար էլ ժամանակ չըկայ։ Ա՛կ իմ անձս և հենց հիմիկ սովորիր սրանով, թէ իմ ժամանակիս վերջն էլ մոտենում է։

Մին էնպիսի գերեզմանի թումի շուտով ինձ վերայ էլ կըբարձրանայ մին անյայտ երկրի մէջ։ Ինչ կըծածկէ էս իմ մարմինըս և ոսկորներըս խաւարի մէջ և նորանց արեգական լուսիցն և մարդկանց աչքերիցն ծածուկ կըպահէ, մինչև որ երկինքն անց կըկենայ և ամէն ժամանակն կըվերջանայ։

Կարելի է որ իմ ընկերներիցս մինն, որ դեռ կենդանի կըմնայ, կընշանակէ հասարակ քարի վերայ իմ օրերի համարըն, էս աշխարհքիս ունայնութիւնըն, էս կեանքիս տկարութիւնըն և ժամանակի վերջըն յիշելոյ համար։ Կարելի է որ մին բարեկամ մին քանի ժամանակ կըգայ որ էս իմ հանգիստանալոյ տեղըն տեսնէ. Կա-

ըելի է որ իմ մնացած բարեկամներիցն մինն կըգայ որ իմ գերեզմանի քարին մօտ անձայն կարդալովն իմանայ. թէ ինչ է մարդոյ մահն. և կարելի է որ իրան ընկերին ցոյց տայ իմ մահուան օրըն, և սահմանը։ Ով հանդիսաւոր և ահագին օր, որ կըվերջանայ էն իմ ժամանակն, որ ինձ նշանակված է էս աշխարհքումս, և իմ ամէն գործքերըս և աշխատանքներս։ Ո՛վ մտածիր իմ անձս, թէ հենց էն ժամանակն, որ իմ բարեկամներս և օտար մարդիքն կըկանգնին և հէսապ կանեն էն օրի թիւրն, որ դու էս աշխարհքիցս դուրս եկիր. քո վիճակն վճռած կըլինի հաստատ և անփոփոխ դատաստանով. որ կամ յաւիտենական երանութիւնըն վայելես քո ժամանակըն Աստուծոյ կամաց պէս գործ ածելոյ համար. կամ յաւիտենական չարչարանք և տանջանք քաշես։ որովհետև քո ժամանակըն փուչ տեղն ես անցկացրել։

Ժամանակն կըվերջանայ։ Քանի ծանր մեղադրութիւն է մեզ համար։ Մենք յետ քցեցինք մեր կեանքի ճշմարիտ պարտաւորութիւններըն և աշխատանքներըն և հաւատքի գլխաւոր հարկաւորութիւններըն. և կարծելով, թէ սորանց կատարելոյ համար դեռ ժամանակ շատ կայ. մեր կեանքըն կորցրինք անպիտան և փուչ բաներին հետևելով։ Ո՛րքան օգուտ կըլինէր, եթէ մենք ամէն օր ժամանակի վերջին համար

մտածելով՝ էնպէս միտք կանէինք, թէ հենց հիմիկ հրեշտակի ձայնը լսումենք կամ Յիսուսի Քրիստոսի դատաստանի առաջին կանգնած ենք. և ապա սորանով կըկանչէինք և կըզարթնացնէինք մեր հոգին՝ որ հանդիսաւոր համար տայ, թէ մենք էստեղ մեր ժամանակըն ինչպէս ենք անցկացրել։ Թոյլ տուէք ինձ որ մին քանի մանր քննութիւն անեմ. պատճառն որ՝ հասարակ վարավուրտ անելն քիչ է մարդոյ խղճմտանքըն հաւանացնում և սիրտըն շարժում։

Ուրեմն մեզ հարցնենք.

Ա. Հ.) Զի՞ որ մեր ժամանակի մեծ բաժինըն անց ենք կացրել պարապութեան մէջ ննջելով. և կորցրել ենք էն՝ առանց մին օգտակար բան մտածելոյ կամ գործելոյ։ Քանի՞ մարդիք կան, որ ինչ ժամանակ որ պարապ սահմաններ ունին առաւօտումն, որ կարող էին ջերմեռանդութենով պարապիլ աղօթքին, անց են կացնում նորանց քնի մէջն և փուչ բաների մէջ առանց Ա.Յ։ Քանի՞ կէս օրվան և իրիկվան սահմաններ էլ կան, որ հենց էն կերպով անց են կացնում պարապութեան և ծուլութեան մէջ, մինչև որ մին կէս սահմ էլ իրանց օգտի համար գործ չածեն առաւօտիցն մինչև իրիկունն։ Ապա հիմիկ նորանց ժամանակն անց կացաւ և նորանք չիմացան, թէ ի՞նչ բանի համար գործածեն նորան, եբը որ էն նորանց ձեռքն

էր տրվված. և հիմիկ նորա անց կենալուց յետոյ չեն իմանում, թէ ինչպէս են գործածել նորան. ինչու որ՝ իսկի նորա համար հէսապ չեն արել. և հիմիկ իսկի չեն պատրաստված, նորա համար պատասխան տալ: Բայց ասա. միթէ ամէն մարդոյ մեծ դատաւորն չի՞ պահանջիլ էն հէսապը նորանցից էն վերջին և ահաւոր օրումն. միթէ հենց նորանց բնութիւնը և ծուլութիւնը կընդունի պատասխանոյ տեղ, որ չըդատապարտէ նորանց. անկարելի է:

Լուսերէ.) Չէ՞ որ մենք շատ աւելի ժամանակ մաշեցինք քէֆ անելով և ուրախութիւնների մէջ, քան որ պէտք էր: Ուրախութիւններն չեն արգելված, երբոր նորանք հարկաւոր են, և հանգստութիւն են տալիս մեր մտացն, որ ծանրացել է գործքերով և աշխատանքներով. և երբ որ զօրացնելով պատրաստումն մեզ նոր պարապութեանց և աշխատանաց համար: Բայց ասա. չէ՞ որ մենք չափիցն աւելի մատնելենք մեզ նորանց: Չէ՞ որ մենք նորանց համար կորցրել ենք էն ժամանակը, որ տրվված էր մեզ, որ մեր անձներըս պատրաստենք մահուան և յաւիտենական աշխարհքի համար, և ման գանք էն բաներին համար, որ մեզ աւելի հարկաւոր էին:

Չէ՞ որ չափիցն դուրս շատ ժամանակ ենք մաշել ունայն ընկերութիւնների մէջ նստե-

լով և փուչ խօսակցութիւն անելով։ Զէ՞ որ շատ անգամ բոլոր իրիկունքն կորցրել ենք նորանցով՝ թէև խղճմտա՛ք յորդորումէր մեզ՝ թէ պէտք է մեզ աւետարանի խօսքերքն կարդալ և մտածել և դէպի Աստուած աղօթք անել։ Զէ՞ որ զուր տեղն ման ենք եկել տանից տուն տեսութիւն անելոյ համար։ Ո՛չ երբ որ իրար հետ նստելով մեր խօսակցութիւնն պրծել էր՝ սուս ենք կացել, երբոր մենք և մեր բարեկամներն չենք իմացել, թէ ինչ խօսենք կամ ժամանակն ինչ բանով անց կացնենք. չէ՞ որ ունայն և անպիտան զրոյց ենք արել. ի՛հարկէ ինքան պէտք էր մեզ ժամանակն կորցնել, մինչև շատ անգամ ոչ մէնակ քամին և հաւայի եղանակն. բայց էլ՝ որ ամէնից վատ է՝ թէ ուրիշ մարդկանց և թէ մեր ընտանեաց անարգանքն և նախատինքն առաջ ենք բերել մեր խօսակցութեան մէջ միայն նրա համար, որ չընձանձրանանք և մեր փուչ զրոյցն երկարացնենք։ Բայց իսկի մին խօսք Աստ համար և նորա ողորմութեան համար չէր կարող մտնել խառնվիլ մեր խօսակցութեան մէջ, որ մեր ձանձրութեան ժամանակն քաղցրացնէ և ուրախացնէ։ Մի թէ էս ամէն սահմաններիս համար հէսապ չէ՞ն պահանջիլ մեզանից։ Մի թէ էն դատաւորն լաւ հաւան կըկենայ մեզ. երբոր նորանից թողութիւն խընդրելով կասենք՝

թէ մենք էս բաներըս և բամբասանքներըս նրա համար արինք, որ չէինք իմանում, թէ ինչ խօսենք և կամ ինչ բանով անցկացնենք մեր ժամանակը։

Ընդդէմ.) Չէ՞ որ մենք մեղաւոր ենք նորանով, որ շատ անգամ և անդադար թողել ենք և կամ ուշացրել ենք մեր յատուկ հարկաւոր գործքերը և կամ մեր սուրբ հաւատքի պարտաւորութիւնները, և պարապվել ենք ուրիշ անպիտան բաներով՝ կարծելով, թէ դեռ ժամանակ շատ կայ. միթէ սովորե՞լ ենք մենք իմաստութեան էն գլխաւոր և շատ հարկաւոր կանոնը. թէ իսկի յե՛տ մի՛ քցեր էն բանը մինչև էգուցվան օրն, որ կարող ես անել էսօր. և իսկի յետ մի՛ քցեր էն բանը մինչև նոր գալու սահաթն որ կարող ես անել էս հիմիկվան սահաթումս։ Չէ՞ որ շատ անգամ մեր անմտութիւնը հասկացել ենք՝ թողելով և կամ ուշացնելով մեր հարկաւոր գործը, որ հենց իրան ժամանակումն պէտք էր կատարել։ Իմաստուն Սաղոմոնն ասում է. թէ ամէն բանի համար իրան ժամանակ կայ և ամէն ստեղծվածի համար ժամանակ՝ երկնքի տակն։ Այս ճշմարիտ է, որ ամէն խելացի մարդ պէտք է գիտել և հետևիլ, որ ամէն բանը իրան յատուկ ժամանակումն գործէ և կատարէ. ինչու որ՝ շատ անգամ մենք զղջանումենք, որ մեր պատշաճ

ժամանակը կորցրինք։ Պատճառն որ՝ հենց սրա համար շատ թշուառութիւն ենք քաշում և շատ անգամ պատահումէ, որ մենք մեր բանը իսկի չենք կարող կատարել. որովհետև իսկի մին էլ պատշաճ ժամանակ չենք գտնում նորան կատարելոյ համար. էլ աւելի ժամանակ չըկայ։

Դիտլիկս դատաւորն յետ քցեց էն խօսակցութիւնը որ Պօղոս Առաքելոյ հետ ունէր Քրիստոսին հաւատալոյ համար և արդարութեան համար և նոր գալու դատաստանին համար, մինչև որ պատշաճ ժամանակ գտնէ՝ բայց հաւատալի է թէ իսկի մին էլ չը՛գտաւ։ (Գործք Առաքել. 24. 25։) Այս Աստուծոյ բանն սովորցնում մեզ, որ եթէ մենք չենք հետևում մեր փրկութիւն ստանալոյ համար էս հիմիկվան ժամանակումս, որ ողորմութեան և շնորհաց ժամանակն է, հրեշտակն պատրաստ է աղաղակել. թէ ԷԼ ԱՐԷՆ ԺԱՄԱՆԱԿ ԷՆԷՅ։ Թէ որքան ժամանակ է մնում մեզ համար՝ որ մեր փրկութեան համար գործածենք, էն միայն Աստուծոյն է յայտնի։ Մեր մնացած օրերն նորա կամքիցն են կախված և նորանց թիւն ամէն իրիկունն պակասումէ։ Սրա համար թող չը՛տաս ով մարդ, որ էգուցվան օրի առաւօտն քեզ մին էլ ծուլութեան մէջ գտնէ։ Մտածիր հիմիկ՝ թէ ինչպէս չարաչար ես անցկացրել քո առաջ-

վան ժամանակին, սահմանքերին, ամիսներին, և տարիքին, մեղքի և յիմարութեան մէջ մանդալով և կամ ունայն և փուչ պարապորդութեանց հետևելով։

Այս մտածմունքս որ է քո անցկացած կեանքի համար, թող քո սիրտն լցնէ զղջութեամբ՝ էնպէս որ սրանից ետև միշտ հետևող լինիս քո պարտաւորութիւններին կատարելոյ համար հենց էս ժամանակումն որ ձեռքդ կայ։ Եւ որովհետև էլ յետ ես ընկել քո Քրիստոնէութեան գործքերից անցկացած ժամանակումն, ապա հիմիկ հետևիր որ շուտ շուտ առաջ գնաս. և քո հոգոյ ամէն զօրութեանովն ջանք արա որ հասնես էն վարձին և պսակին, որ Աստուած իրան հաւատացեալների առաջին է դրել երկնքի արքայութեանումն։ Այսիր Աստուծոյ ձայնն նորա սուրբ աւետարանի մէջն երկուսպատիկ մխիթարութեամբ, և ցանկայիր նորանով օգուտ ստանալ քո հոգոյ համար։ Աղօթք արա դէպի երկնաւոր և շատ համբերող Աստուածն պարզ մտքով և ջերմեռանդ սրտով. աղաղակիր դէպի նա և անդադար աղաչանք արա, մինչև որ քո մեղաւոր հոգին դարձած լինի զղջութեան և ապաշխարութեան մէջ՝ նորոգված լինի սրբութեան հետևելոյ համար. մինչև որ հաստատ նշանով իմանաս, թէ Աստուծոյ ճշմարիտ սէրն և նորա որդի Յիսուսի

Քրիստոսի կենդանի հաւատքն քեզանում գործ-
ված հաստատված է։ Եվ իսկի չըզդաղարես,
մինչև որ շնորհքովն հաստատ յոյս ստանաս քո
սրտումդ, թէ դու Աստուծոյն հաճոյ ես և թէ նա
է քո հաշտված Հայրն. որ երբ որ օրերն, ամիս-
ներն և տարիքն անց կըկենան, հաստատ մնանես
արքայութեան մէջ, որտեղ որ յաւիտենական
լոյսն և ողորմութիւնն և խաղաղութիւնն
կըվայելես։

Ժամանակն կըվերջանայ։ Փառք Աստուծոյ.
որ նա դեռ չի վերջացրել։ Թող շնորհակալ
լինինք նորա ողորմութենիցն, որ նա էսքան
ժամանակս զգուշացնումէ մեզ և շատ կերպ պա-
տահմունքներով զարթնացնումէ մեր հոգին,
էն ժամանակի վերջըն յիշացնելոյ համար՝ որ
մնաենումէ։ Ամէն հիւանդութիւնն մեր միտքս
է բերում, թէ մեր կեանքն մնաենումէ իրան
վերջին։ Մեր բարեկամների և ընկերների
մահն ամէն ժամանակ մեզ յայտնի և հաստատ
յիշացնումէ, թէ մեր մահն էլ հեռու չէ։
Հենց էս կերպովս ամէն պրծված շաբաթն և
նոր կիրակին էլ զգուշացնումէ մեզ նորա հա-
մար։ Ամէն քարոզ, որ ժամանակի կարճութեան
և մեր կեանքի անհաստատութեան համար խօ
սումէ, է նոր դաս և յորդորմունք մեզ համար,
թէ հրեշտակն շուտով կըյայտնէ մեր ժամա-
նակի վճիռըն։

Այս որքան մեղաւոր կըլլինինք մենք, եթէ միտք չը դնենք էս ամէնահաւոր յորդորմունքներին։ Ահա քանի՞ երկար ժամանակ է, որ Յիսուս Քրիստոս, և նորա ողորմութիւնն և աւետարանն կանչեց քեզ, մինչև որ կամաց կամաց սկսել ես քո հոգոյ փրկութեան համար միտք անել։ Ու հիմիկ էլ եթէ մեղքի քնիցն և թմրութենիցն զարթնացել ես. միտքդ բե՞ր թէ ինչքան երկար ժամանակ Յիսուս համբերեց քեզ, մինչև որ նորա լուսոյն լուսաւորվեցար և քո կորուստըն ճանաչեցիր. և թէ նորանից ետև էլ ինչպէս անդադար յորդորմունքով և զօրաւոր գործքերով, ողորմութենով և պատիժ տալով, քաղցր սիրով և սաստկութենով, ուրախանալի խոստմունքով և ահ տալոյ խօսքով և մանաւանդ սուրբ հոգոյ ներսի ծածուկ ներգործութենովն և առաջնորդութենովն օրէցօր հոգս արաւ քեզ համար՝ որ քեզ յետ դարձնէ Աստուծոյ մօտ, և քո հոգին ապրեցնէ և իրան շնորհքովն բժշկէ։ Այս հիմիկ որ էս ամէնքս իմացար՝ իրաւի՞ է որ ճշմարտութենով է՞ս քո մեղքերիցն զղջացել։ Ճշմարտութենով է՞ս ընդունել քեզ ընծայված գթութիւնն և շնորհքն։

Յանձնե՞լ ես քեզ ամէն բանում քո տէրին և բռնե՞լ ես բոլոր սրտով նորա փրկութիւնը։ Ահա հիմիկ է ընդունելի ժամանակն, հիմիկ է փրկութեան օրն։ Այս օր, որ նորա ձայնը

լսէք՝ չի պնտացնէք ձեր սրտերքն։ Իսկի մին տեղ չի ասված, թէ էգուց է փրկութեան օրն, կամ թէ էգուց է ընդունելի ժամանակն։ Այց հիմիկվան սահաթն միայն տրվված է մեզ։ Ուրեմն ամէն նոր օր և ամէն սահաթ է անասելի ողորմութիւն մեզ մեղաւոր մարդկանցս համար։ Մեծ ողորմութիւն է ով մեղաւորք՝ որ հենց էս առաւօտս դեռ աշխարհքումս էք զարթնացել և ոչ թէ դժոխքի մէջն. որ հիմիկ իսպառ դէն չենք քցված և դեռ հիմիկ ամէն յոյս և ամէն ողորմութիւն չի կտրված։

Ժամանակն կըվերջանայ։ Հրանելի՛ է նա՝ որ էս վերջի բոպէին ուրախութենով մտիկ կըտայ. պատճառն որ՝ պատրաստ է նորա համար։ Նա իսկի պէտք չէ որ վախենայ ոչ էս վճռիցն և ոչ հրեշտակի երդումիցն, երբ որ իրան ձեռքն դէպի երկինքն կըբարձրացնէ և բարձր ձայնով կըկանչէ. Եւ ել ա՜ել ժամանակ ըսլայ։

Հրանելի են նորանք՝ որ էսպէս լաւ են գործածել իրանց կեանքըն և ողորմութեան և շնորհաց օրքն. երանելի՛ են. ինչու որ՝ Աստուծոյ պատկերն մին էլ նոր փայլումէ նորանց սրտի մէջն և իրը հաստատ նշան հաւատացնումէ նորանց, թէ Աստուծոյ առաջին ողորմութիւն և շնորհք են տացել Յիսուսի Քրիստոսի ձեռովն։ Նորանք յուսոյ երկրումն քննեցին և ամօթով խնացան իրանց անցկացած ան-

մութիւնը. լաց էլան իրանց մեղքերին համար և զղջացան նորանցից, դեռ քանի որ զղջանալոյ ժամանակն չէր անցկացել. նորոգվեցան և նոր ստեղծված էլան սուրբ հոգովն, էնպէս որ նորանց պռօշներն և նորանց կեանքն էլ յայտնումեն էս երանելի և Աստուածային փոփոխութիւնը, որ նորանց մէջն է գործված. նորանք պատրաստվեցան մահի համար, գիտելով թէ կեանքն և ժամանակն մէնակ նրա համար էր տրվված իրանց: Ճշմարիտ երանելի են էն հոգիքն. պատճառն որ՝ էդպէս խմացան և պատուեցին ժամանակի արժանաւորութիւնը և գինը, որ ոչ թէ մէնակ չի կորցրին նորան անպիտան և փուչ բաներով, բայց նորանով էլ իրանց համար էնպէսի գանձ (գոգնոց) ճարեցին պատրաստեցին, որ էն իրանց անցկացած ժամանակիցն շատ աւելի թանգ և փառաւոր է. ինչու որ՝ Աստուածային ողորմութեան և շնորհաց գանձը գտին և յաւիտենական փառաց յոյսը ըստացան: Ճշմարիտ երանելի են էն հոգիքն. ինչու որ՝ նորանց բաղտաւորութիւնն սկիզբը կառնէ հենց էն ժամանակումն, որ նորանց մահկանացու կեանքն էս աշխարհքումն վերջանումէ: Թող աւելի մանր մանր քննենք և մտածենք նորանց էս երանութիւնը:

Սաւարի և տարակուսանաց ժամանակն անցկացաւ. էլ դուք մոլորութեան և անմտութեան

մէջ չէք թաղվիլ։ Ամէն բան ձեր աչքին կերևի իրան ճշմարիտ կերպովն Աստուածային լուսոյ առաջին, և դէմ յանդիման կըտեսնէք ձեր առաջիդ դրած մեր Աստուծոյ գեղեցկութիւնը և յաւիտենական ճշմարտութիւնը։ Կըտեսնէք նորան հենց իրան փառաւոր էութենումն և իրան որդի Յիսուս Քրիստոսումն, որ է Հօր լուսափայլ պատկերն. կըճանաչէք նորան, ինչպէս որ նա էլ ձեզ ճանաչումէ։

Փորձվելոյ և վախենալոյ ժամանակն անցկացաւ։ Երբ որ մին անգամ էս աշխարհքիս սահմանիցն դուրս կըգնաք և ամէն մարմնական մոլորացնող բաներից կըհեռանաք, ապա փրրկութիւնն էլ իսկի տարակուսելի չի լինիլ։ Էլ իսկի վախ չի լինիլ, թէ Հօր սիրոյ և նորա սիրեցեալ Որդոյ շնորհաց մասնակից կըլինիք թէ չէ՝ բայց հաստատ կըվայելէք Աստուծոյ ամէն փառքն և սէրն։

Ապա մեղքն էլ ոչ ժամանակ և ոչ տեղ չի դոնիլ, որ ձեր մէջն բնակվի։ Որա իշխանութիւնն որ մեր մահկանացու մարմնոյ մէջն բնակվի կըվերջանայ, երբ որ հենց մարմինն ինքն փոշի կըդառնայ։ Ապա սրանից ետև էլ դուք իսկի չէք ղգալ և իմանալ նորա խիստ և պիղծ խռովութիւնները, ոչ ձեր սրտի և ոչ ձեր կեանքի մէջն։

Ձեր հոգևոր թշնամի սատանային հետ կռիւ

անելոյ ժամանակն անց կացաւ. էլ հակառակութիւն չըկայ մարմնոյ և հոգոյ մէջն. էլ կռիւ չըկայ աշխարհքի և սատանայի հետ, որ հաղարաւոր կերպով հետևումէր ձեզ խաբել և յետ դարձնել ձեր երկնաւոր յուսոյն. ձեր զինուորութեան գործն պրծվել է. և ձեր յաղթութիւնն իսպառ կատարվել է:

Ձեր Աստուածանից ջոկված և հեռացած լինելոյ ժամանակն անց կացաւ. անհոգութեան, ծուլութեան և մին էլ մեղքի և կորուստի մէջ ընկնելոյ վալսենալի ժամանակն անց կացաւ: Ապա սիւն կըլինիք Աստուծոյ տաճարումն և էլ դուրս չէք գնալ նորանից: Նա ինքն կըսիրէ ձեզ ինչպէս իրան անձրն, և ձեր սիրոյ բոցրն էնքան կըվառէ և կըբարձրացնէ, մինչև որ հրեշտակների և կատարեալ սըրբերի սիրոյն նման լինի:

Ապա էն ժամանակն էլ չէք չարչարվիլ մեղաւորների ընկերութենովն: Ձեր հոգին էլ չի ծանրանալ և շփոթվիլ ամբարիշտների խօսակցութենովն, և ձեր սուրբ և երկնաւոր պարապմունքներն էլ չեն կորվիլ Աստուծոյ և նորա շնորհաց թշնամիքներովն:

Ձեր ծանր աշխատանաց և նեղութեանց ժամանակն անց կացաւ: Երանելի են էն մեռելներն՝ որ Տէրումն ննջեցին (մեռան). ինչու որ՝ հոգին էս է ասում, որ իրանց աշխատանքնե-

րիցն հանգիստ առին։ (Յայտ. ԺԳ. 13։) Ո՛չ սուգ և ո՛չ աղաղակ չի՛ լինիլ. ինչու որ՝ տրամութեաղբիւրներն չորացան յաւիտեան. և ո՛չ էլ ցաւ չի՛ լինիլ ո՛չ մարմնոյ և ո՛չ հոգոյ. ինչու որ՝ Աստուած ամէն արտասուքը կըսրբէ նորանց աչքերիցն և էլ մահ չի՛ լինիլ։ (Յայտ. ԺԴ. 21. 4։)

Ամէն բան կատարված է. ասաց մեր օրհնեալ Փրկիչն խաչի վերայ. ամէն բան կատարված է; կարող են նորա ճշմարիտ աշակերտներն էլ ասել մահու սահմանումն և ժամանակի վերջումն. իմ մեղքերն, յիմարութիւններն, տրտմութիւններըն և չարչարանքներն, ամէնն կատարված է յաւիտեան, և էն զօրաւոր հրեշտակն երդում կուտէ, թէ էս թշուառութեանց ժամանակն վերջացաւ և էլ չի՛ լինիլ. նորանք անց կացան և իսկի մին ժամանակ յետ չեն դառնալ։

Ո՛վ երանելի հոգիք, որ էս երկրումն ձեր օրերի փոքր և անյայտնի թիւրն էդպէս իմաստութենով կարգեցիք, որ շուտով ձեր անձնեըրն պատրաստեցիք երկինքն գնալոյ համար։ Երանելի էք դուք ամէն բանից և մարքից աւելի։ Օրերն, ամիսներն՝ տարիքն և ժամանակի ամէն կարճ փոփոխութիւններն, ինչպէս փոքր կէտ կըծածկվին ձեր աչքերիցն էն երանելի և յաւիտենական կեանքի ծոցումն։ Ժամանակի

գետն, որ գնումդր էս մահկանացու կենաց մէջ և տանումդր ձեզ շատ գայթակղութեան և փորձանաց, և տրտմութեան քարերի միջոցն. կրքցէ ձեզ անվերջ ուրախութեանց ծովի մէջ։ Իրաւի էն երանութիւններն պէտք է որ յաւիտենական լինին. ինչու որ էն տեղ ժամանակ չը՛կայ. բայց փոխված թաղված է անմահ յաւիտենականութեան մէջն։